ՓՈՂԱՆԴ

ԹԻՒ 1146 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ — 1877 ՅՈՒՆՎԱՐ 26

ԱԶԳԱՑԻՆ

Կարինէն յունվար 13 թուով գրուած նամակէ մը կ՚քաղեմք՝ հետաքրքրական տեղեկութիւնները։

1.—Արժանահաւատ անձերէ կիմանամք, թէ Ս. Լուսաւորիչ վանքին վանահայր արժանապատիւ Տ. Ներսէս վարդապետ անցեալներն Հինձք գիւղէն թուանշ իջնելու ժամանակ կիյնայ ի ձեռքս աւաղակաց, որոնք զանի մերկացուցանելէն յետոյ դանակոծած ատեններն՝ հեռուէն ձիաւորի մը գալը տեսնելով, թալկացեալ կթողուն ու կփախչին։ Կըսուի, թէ խեղճ վարդապետն այժմ անկողնոյ կծառայէ։ Դեռ չկրցայ մանրամասն տեղեկութիւն ստանալ։

2.—Ինչպէս յայտնի է, անցեալ օգոստոս ամսոյ մէջ տեղւոյս առժամանակեայ թաղական խորհուրդն հրաժարելով՝ նորեր ընտրուած էին. սակայն նոցա մեծագոյն մասն կամովին հրաժարած ըլլալով՝ Ս. Առաջնորդն հարկադրեցաւ հրապարակային ծանուցմամբ կրկին քուէարկել տալ ժողովրդեան, որով բացարձակ առաւելութեամբ պակասորդը ալ ընտրուելով՝ և ընտրեալք ընդունելով վաւերացան։ Նորընտիր թաղական խորհուրդը ստանձնեց իւր պաշտօնը անձնուիրութեամբ և գործօն ընթացիւք, որոց յարատեւութիւն և յաջողութիւն կմաղթեմք սրտագին։

Այս տարի ծննդեան տօնին առթիւ, իւղագին և աղքատաց անուամբ, ջանիւք և աշխատութեամբ նորընտիր խորհրդոյն, 11500 դրի չափ հաւաքուեցաւ, յորմէ 5000 ի չափը աղքատաց բաշխուեցաւ։

Վերոյիշեալ գումարին հաղուագիպ առաւելութեան պատճառ կհամարին ոմանք թղթադրամը. բայց մեք ընդհակառակն կվկայեմք թէ նորընտիր թաղական խորհրդոյն անխոնջ ջանից արդիւնքն է, և ո՛չ այլ ինչ։

3.—Այս տարի թէ՛ ձրագալուցի երեկոյին և թէ՛ Ծննդեան դիշեր ժամերգութեան ու պատարագի ատեն ժողովրդեան վիճակը խիստ բարեկարգ, խաղաղ ու հանդարտ էր։ Ձրագալուցի երեկոյին, Ս. Առաջնորդն հրապարակային ծանուցմամբ նախ դրուատեց թաղականաց անձնուիրութիւնը ու ձեռք առած օրինաւոր միջոցներն. և ապա ներկայ ժամանակին ծանրակշռութիւնն ակնարկելով՝ յորդորեց զժողովուրդն, զգուշանալ ազգին անարգանք բերող անվայել վարմունքէ, ամենուն հետ իրաւախոհութեամբ ապրիլ, և միշտ համեստ ու խոհական շարժիլ։ Նորին սրբազնութիւնը ծանոյց նաև, թէ Ծնընդեան դիշերն իդական սեռի եկեղեցի գալը արդիլուած է. և խոստացաւ ութերէից ժամերգութիւնը կանանց յատկացուցանել։ Ըստ այսմ որոշման, այսօր ճաշու ժամերգութիւնն ու պատարագն կանանց համար պիտի լինի. եկեղեցական շքեղ թափորին հանդիսատես լինելու համար՝ հեռաւոր ու մօտաւոր թաղերէն հայ կանանց զարդարեալ կերպարանօք գունդագունդ եկեղեցի երթալն տեսայ այս առտու. Պատարագի ժամանակ դպրութիւն պիտի ընէին Հռիփսիմեանց սանուհիք. երբէկ լսեցինք, թէ ոմանք կտրտնջան եղեր այս տնօրինութեան դէմ՝ ներկայ ժամանակին անպատեհ և ասիական երկրի մը անսովոր համարելով։ Նամակս գոցելու վրայ էի, լսեցի թէ այս առաւօտեան ժամերգութեան ատեն եկեղեցւոյ խորհուրդն չաւարտած՝ կանանոցի դուռը կբացուի, իգական սեռէն մեծաքանակ բաղմութիւն ներս կխուժէ՝ իրենց յատկացեալ եկեղեցական թափորին հանդիսատես լինելու առթիւ տեղ ճարելու համար, որ ատեն արանց մէջ ալ բարձրաձայն շփոթութիւն և աղմուկ մ՚է՝ կբրդի, ժամերգութիւնը կը խափանի և Աւետարանի ընթերցումն կընդմիջի։ Կըսուի, թէ սոյն միջոցին կանանց մէջ ծեծկուռք պատահելով, ո՛րին վարսակալը, ո՛րին մանեակը, ո՛րին մատանին, և ո՛րին ալ գինդը ինկեր կորսուեր է։ Եկեղեցւոյն դաւթէն ժողովրդական ամբոխն ցրուելու համար՝ ոստիկանաց միջամտութիւնն հարկ եղաւ։

4.—Կարնոյ մէջ կամաւոր զինուորագրութիւնը օրէ յօր յառաջ կերթայ, և թիւն կկրկնապատկի, որոց հաւաքականութիւնը այժմ 1600 ի հասած է։ Սոցա մէջ կդտնուին քրիստոնեայք՝ 300 ի չափ։ Քրիստոնեայ կամաւորք խիստ գոհ և շնորհակալ են թէ՛ իրենց հրամանատարէն և թէ՛ ընկերներէն։ Կըսուի, թէ ձեռնհաս կամաւորին զգեստն իրմէ է, իսկ անկարողինք՝ կառավարութիւնը կուտայ։ Ուրբաթ ու կիւրակէ օրերէ զատ, միւս օրերն ալ մէկմէկ ժամ կրթութեան կերթան քաղաքիս Եէնի դափու ըսուած հրապարակը։

Երկու օր յառաջ, տեղւոյս տաճիկ ուսանողաց դասէն անուանի օրինականի մը (մոլլա) առաջնորդութեամբ 200 ի չափ անձինք միահամ և միահաւան անցան դացին կամաւոր զինուորութեան դրօշին տակ։ Տեղական կառավարութիւնը որոշեր է առանձին գումարտակ մը կազմել ղասոնք՝ շփոթութեանց ու անկարգութեան տեղի չտալու համար։

Ասա հասարակաց սիրտն ու կարծիքն աւելի խաղաղութեան հակամէտ է քան թէ պատերազմի. քանզի պատերազմի պատճառաւ մեծամեծ ջնասներ բրած, և պատերազմին աղետից ու վտանգներուն քաջ խելամուտ եղած են։ Տէ՛ր մի արասցէ, եթէ մօտերս կամ առաջիկայ դարնան պատերազմ ծագի, յայնժամ ո՛վ դիտէ թէ արմտեաց դիներն ո՛րչափ պիտի սղեն. կվախցուի թէ մի՛ դուցէ ժամանակին արտորայք խոպան մնալով և կամ նորաբոյս հունձքն առաթուր դընալով՝ սոսկալի սով մը լինի այս կողմերը։ Հետևաբար, մեք գաւառացիքս շա՛տ և շատ պէտք ունիմք խաղաղութեան, որով պիտի կրնամք ներկայիս զգացուած ցաւերն ամոքել և ժամանակիս բաղմաթիւ ջնասներն մոռնալ։ Այսօր, կարնոյ պէս շահաբեր և պտղատու երկրի մը բնակչաց գրեթէ փոքրաթիւ մասն կբրցած է հաղիւ ուրեմն իւր ձմրան պէտքերն ու պատրաստութիւններն հոգալ. մնացեալք ներկայ առևտրական անձկութեան պատճառաւ չեն ժամանած և ո՛չ մի տնական պակասութիւն հոգալ. ո՛րը վառելիք չունի, ո՛րը ուտելիք չունի, ո՛րն ալ ամենայնիւ թափուր ու չքաւոր։ Արդ եթէ պատերազմը վրայ գայ, Աստուա՛ծ իմ, ո՛ւր պիտի հասնի, ի՛նչ պիտի լինի մեր վիճակն ու ապագայն։

Արդէն տեղւոյս արհեստաւորաց մեծ մասն՝ գործոց ներկայ տագնապին երեսէն՝ կրպակնին փակած, ձեռն ի ծոց շուկայէ շուկայ կթափառին։ Շնորհիւ և բարձրագոյն որոշմամբ տեղական բարեխնամ կառավարութեան, թղթադրամին իւր իսկական գնոցն առնել տալու թոյլտուութիւն եղաւ թէև, բայց դարձեալ գործ չկայ։ Կըսեմք, թէ արքունի փուռերէն զատ հասարակաց փուռերն ալ արքունի ղօրաց հաց տալ ըսկըսեր են։ Հոս այժմ մէկ երկու կեդրոնական պանդոկներէ զատ, միւս բոլոր պանդոկները պարպուեցան ղօրաց համար. և կըսուի թէ ի պահանջել հարկին տուներն ալ պիտի պարպուին այս առթիւ։ Եթէ այս վերջինն ալ ըլլայ՝ յայնժամ աւելի կծանրանայ մեր վիճակը։

5.—Շիտակը խօսելով՝ թէ՛ տեղւոյս և թէ՛ դրսէն եկող ղօրքերն խաղաղ ու հանդարտ են. ցարդ և ո՛չ ոք դանկի մը ջնաս տեսած չէ անոնցմէ։ Անցեալ ամսոյ մէջ շրջակայ գաւառներէն եկող ղօրքէն քանի մը վաշտ ձմերոց ղրկուեցան մերձակայ գիւղերն. գիւղացի հայերն խիստ գոհ են ասոնցմէ. կվկայեն թէ ղօրքերն մաղիւ չափ ծանրութիւն չունին իրենց վրայ, այլ ընդհակառակն ամեն անգամ նոցա օգնութիւնը տեսած են ու կտեսնեն. քանզի ղօրաց ի գիւղօրայս ձմերելէն հետէ տեղացի տաճիկք մեղմացած ու քաղցրացած են։

Երբէկ չինական ազգային մը պատմեց

մեզ, թէ անցեալներն Ազարակ գիւղը ձմերող վաշտի մը հարիւրապետն՝ որ լուսամիտ մէկն է եղեր, տաճկի մը տուն իջևանած ըլլալով՝ երեկոյ մը նոյն տուն դրացի քանի մը տաճիկ գտնուած և քրիստոնէից դէմ անպատեհ խօսքեր ըրած ըլլալնուն համար, հարիւրապետն խստիւ կյանդիմանէ զանոնք, և սրտմտելով կելնէ անմիջապէս կերթայ ուղղակի գիւղին հայ քէհեային տունը, ուր այժմ իրեն արժանամեծար յարդանօք կհիւրասիրուի։

Նոյնպէս կիմանանք, թէ գիւղերը ձմերող զօրաց հրամանատարները խստիւ կպատուիրեն զօրաց, որ տեղացի բնակիչներէն՝ թէ՛ տաճիկ լինին և թէ՛ քրիստոնեայ՝ բռնի բան չառնեն ու վնաս չտան անոնց։ այլ իրենց հացովն ապրին և դրամով դնեն ուղածնին։

—

Կլսեմք, թէ Տփխիսի առաջնորդարանէն հրաման դացեր է վիճակին աղգային վարժարանաց վերատեսչութեանց, որ Թուրքիոյ հպատակ եղող և վարժարանաց մէջ պաշտօն վարող հայազգիները արտաքսեն, և չընդունին մինչև որ նոքա ռուսական հպատակութեան ներքև մտնեն։

Կլսեմք նաև, թէ Ռուսիոյ կառավարութեան կողմանէ այսպիսի հրաման մը տրուած չէ Տփխիսի առաջնորդարանին։

Այս արդելման պատճառաւ, այժմ Տփխիսի մէջ խումբ մը անձինք, որոց մէջ կգտնուին վարժուհիի պաշտօն վարող օրիորդք ալ, թշուառ ու օգնութեան կարօտ մնացած են, և տեղական կառավարութեան աղերսագիր մը տալ որոշեր են։

Այս լուրը անհաւատալի կթուի մեզ, մանաւանդ երբ կըսուի թէ արդիլման հրամանը մեր ազգային առաջնորդարանէն տրուած է։ Ուստի առ այժմ չեմք կրնար ո՛րևէ դիտողութիւն ընել. այլ կենդրեմք Տփխիսի բարեխնամ Առաջնորդ դեր. Տ. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոսէն, որ՝ եթէ կարելի է՝ բարեհաճի ուղղակի կամ անուղղակի ծանօթութիւն մը տալ այս մասին, ի հանդարտութիւն հասարակաց և ի բարձումն դայթակղութեան։

—

Կանխաւ ծանուցած եմք, թէ հանդուցեալ Այվատեան Մատթէոս էֆէնտիի տարաբաղդիկ այրոյն և որբուոց համար՝ հանգանակութիւն մը պիտի ըլլայ։

Արդ՝ հարկ կհամարիմք հրատարակել, թէ մասնաժողովն կազմուած է, և 100 նոց, 20, ու 5 նոց տոմսեր տպուած են, և մասնաժողովոյ անդամներէն Հալաճեան մեծապատիւ Բարսեղ էֆէնտի գանձապահ ընտրուած ըլլալով՝ տոմսակները նորա կնքով վաւերացեալ պիտի ըլլան։ 100 նոց տոմսերը առանձինն նամակներով պիտի ղրկուին ձեռնհաս ազգայնոց. իսկ միւսները հաւատարիմ անձի մը միջոցաւ պիտի ներկայացուին։

Այվատեան էֆէնտի, 10 հազար ղրուշէն ալ աւելի պարտք թողած է . . .։

Մեր յորդորանաց պէտք չկայ։ Արդէն ամեն Հայ քաջ գիտէ այս նուիրատուութեան անհրաժեշտ պէտքն ու կարևորութիւնը։ Ուստի տարակոյս չունիմք, թէ իւրաքանչիւր Հայ իւր կարողութեան չափ մասնակցիլ պիտի փութայ, և բաւական գումար մը պիտի գոյանայ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի օրը, ժամը 9 ին ատենները սովորական հանդիսիւ կայսերական հրովարտակ մը կարդացուեցաւ Բ. Դուռը, որով՝ Միտհաթ փաշայի պաշտօնանկութիւնը, Շուրայի–տէվլէթի նախագահ նախագահ բարձրապատիւ Իսմէթ փաշայի մեծ Եպարքոս անուանիլն, և հետևեալ կարևոր փոփոխութիւններն հռչակուեցան։

Ճէվտէթ փաշա՝ ներքին գործոց նախարար.

Շէհիր էմինի Գատրի պէյ՝ վէզիրութեան աստիճանաւ՝ Պետական խորհրդոյ նախագահ.

Էտիրնէի կուսակալ Ասիմ փաշա՝ դատական գործոց նախարար.

Փարիզի դեսպան Սատըդ փաշա՝ Ռուսճուգի կուսակալ.

Հէրսէքի կուսակալ Ալի փաշա՝ Էտիրնէի կուսակալ.

Պետական խորհրդոյ անդամ Զամիշ Յովհաննէս էֆէնտի՝ Պալայի աստիճանաւ՝ Առևտրական գործոց նախարար.

Ահմէտ Մուխթար փաշա՝ Կարնոյ բանակին հրամանատար.

Կարնոյ նախորդ կուսակալ Սամիհ փաշա՝ Կիրիտի կուսակալ.

Հալէպի կուսակալ Խուրշիտ փաշա՝ Մեծ–Եպարքոսութեան Միւսթէշար։

Նախորդ Միւսթէշար Սայիտ էֆէնտի՝ Պետական խորհրդոյ անդամ.

Ռուսճուգի կուսակալ Ռիֆաթ փաշա՝ Հալէպի կուսակալ.

Բերայի թաղապետութեան նախագահ Քոսթաքի պէյ՝ ներքին գործոց նախարարի Միւսթէշար.

Իսթինաֆի ատենին նախագահներէն Սադըզ Յովհաննէս էֆէնտի՝ Հասարակաց կրթութեան նախարարի Միւսթէշար.

Ահմէտ Վէֆիք էֆէնտի՝ Երեսփ. ժողովոյ առժամանակեայ նախագահ.

Առևտրական գործոց նախարար Հալէթ փաշա՝ Ծերակուտի անդամ անուանեցան։

—

Միտհաթ փաշա՝ երկուշաբթի ժամը 4 ին ատենները կայսերական պալատը կանչուելով՝ ծանուցուեր է իրեն թէ Տաճկաստանէն դուրս ելնելու հրաման եղած է. նա ժամանակ ուզեր է ընտանեացն հետ տեսնուելու և կարասիքն առնելու համար. ժամանակ տրուեր և միանգամայն հրամայուեր է որ բնակութեան համար իւր ուզած տեղը որոշէ. Միտհաթ փաշա Պրէնտիզի (Իտալիա) երթալ խնդրեր է, և հետեւաբար պէտք եղածն առնելէն յետոյ՝ Իզմիտին շոգենաւով ճամբայ հանուեր է, հետը երկու թիկնապահ և երկու Զաւուշ դրուելով։

Միւս կողմանէ կլսուի, թէ քանի մը անդամ պալատը կանչուեր և չէ դացեր, և աքսորման հրամանը տանը մէջ իրեն հաղորդուելով՝ անկէց ուղղակի շոգենաւ մտեր ու ճամբայ ելեր է։

—

Այս առաւօտեան վագրթը՝ Միտհաթ փաշայի արտասահմանուելուն վրայ երկար յօդուած մը գրած է. ուսկից կիմանամք, թէ Միտհաթ փաշա՝ հիմնական կանոնաց հակառակ վարուիլ սկսեր է, հակառակ օդոստափառ Սուլթանին կամաց։ Ինչպէս. Եւմտից նախորդ նախարար Ղալիպ փաշայի պաշտօնանկութիւնը երկիցս պահանջեր է, և պատճառ հարցուած ատեն վերջապէս ամբաստաներ է, թէ թղթադրամի գործողութիւններէն 40 հազար լիրայի դումար մը վրան անցուցած է, որով հարկ եղեր է՝ քննութեան համար յանձնաժողով մը կազմել։

Միտհաթ փաշա՝ Գաղթականների վերաբերեալ Ժողովոյ Միւմէյիզներէն Գատրի էֆէնտիի պաշտօնանկութիւնը առաջարկեր է առանց պատճառի, և չէ բաւականացեր՝ երբ պատասխան տրուեր է թէ հիմնական կանոնաց հակառակ է։

Միտհաթ փաշա՝ կուսակալաց ամսականներուն 40 հազարի վերածուիլն առաջարկեր է, և պնդեր է առանց պատճառն յայտնելու, մինչդեռ Նորին Վեհափառութեան կողմանէ պատասխան տրուեր է թէ՝ ըստ հիմնական կանոնաց երեսփոխանական ժողովոյ ներկայացուելէն յետոյ պէտք է վաւերացուի և գործադրուի։

Միտհաթ փաշա, իրենց սկզբանց ու ընթացից կողմանէ անծանօթ անձինքն շահեցուցանելու համար՝ պաշտօններու վերայ դնելու ելեր է, ծանուցեալ և յարմար անձինքն հրաժարեցուցանելով։

Միտհաթ փաշա՝ ինքզինքը երկրին և պետութեան բարեկարգիչ, ու ազատութեան պաշտպան կը հռչակէ, և միանգամայն պանծանօք կը հրատարակէ եղեր, թէ առանց իրեն՝ չկրնար կանգուն մնալ երկիրն ու պետութիւնը։

Այսպիսի պատճառներով արտասահմանուեր է Միտհաթ փաշա, ըստ հիմնական կանոնաց. և դրամ չունենալուն համար՝ Նորին Վեհափառութիւնը 500 լիրա ալ շնորհեր է, և թէ՝ արտաքսուիլն ժամանակի մը համար է։

Այսօր կամ վաղը, այս մասին ոստիկանութեան կողմանէ տրուած տեղեկագրեր ալ ի պաշտօնէ պիտի հրատարակուին։

—

Զրոյց ելած էր, թէ ոստիկանութեան կողմանէ քանի մը անձինք ալ բռնուեր բանտարկուեր են. բայց այս զրոյցը ստոյգ չելներ։

— Երէկ դեսպանք և գործակատարք շնորհաւորութեան եկան Նորընտիր մեծ Եպարքոսին։

— Երէկ, զինուորական գործոց նախարարն, դատական գործոց նախարարն և այլք կայսերական պալատն երթալով՝ երկար ժամանակ օդոստափառ Սուլթանին քովն անցուցին։

— Այս օրերս Շ.քոտրայի մէջ մասնաժողով մը պիտի կազմուի՝ Բ. Դրան և Գարատաղի մէջ հաշտութեան պայմաններն որոշելու համար։ Այս մասնաժողովին պիտի գտնուին, Բ. Դրան կողմանէ՝ Կոստանդ փաշա, Գարատաղի կողմանէ՝ ազգային ժողովոյն նախագահն, և անդղիական ու իտալական հիւպատոսք։

ՓՈՒՆՋ

— Հոպարթ փաշա՝ Պաթումի ամրութիւններն աչքէ անցուներլու դնաց Բէթմօ շոդենաւով։

— Զինուորական վարժարանաց վերատեսուչ անուանեցաւ՝ կայսերական պալատան Ֆերիդ Սայիտ փաշա։

— Սուլթանիյէ վարժարանին վերատեսչութիւնը՝ կա՛մ Սալիհ էֆէնտիի և կա՛մ Բէրթէվ էֆէնտիի պիտի յանձնուի։

— Կայսերական պալատան ախոռապետ կարգեցաւ՝ Պայթար Ահմէտ փաշա։

— Թաւնուսի զինուորական գործոց նախարարն՝ որ մայրաքաղաքս կդտնուի, քանի մ՝օրէն վերադառնալու համար հեռագրով հրաման ընդուներ է։

— Կայսերական կառավարութեան կողմանէ յատկապէս հրաւիրեալ անդղիացի զինուորականք՝ նեղուցին ամրութիւնները քննելու զբաղեալ են։

— Գերմանական լրագիր մը կգրէ, թէ Վիէննայի օսմանեան դեսպանը՝ հբրամանաւ Բ. Դրան Բէյթի դացեր է հունգարացւոց դաշնակցութիւնը շահելու համար, բայց անյաջող վերադարձեր է։

— Վիէննայի լրագրաց ոմանք՝ Ռուսիոյ մէկ կիղծիքը կհամարին, Բ. Դրան հետ ուղղակի բանակցութեան համար Սերվիոյ թոյլտուութիւն ընելն։

— Սերվիոյ իշխանութիւնը՝ գաղղիացի ընկերութենէ մը փոխառութիւն ընելու ելած է, անտառները իբրև ապահովութիւն տալով։

— Ռուսական լրագիրք սուտ կհանեն Բ. Դրան հետ Գարատաղի իշխանութեան ուղղակի բանակցութեան մտնելուն լուրը. և կյաւելուն թէ Գարատաղ ընդհակառակն նպաստ ու զօրք խնդրած է Ռուսիայէն։

— Եգիպտոսի իշխանութիւնը՝ մինչև ցարդ ըրած այլևայլ օգնութիւններէն զատ, այս օրերս յանձնաժողով մ՝ալ կազմեր է՝ Խտիվին փեսայ Մանսուր փաշայի նախագահութեամբ, ինպատաստ կայսերական կառավարութեան հանգանակութիւն ընելու համար։

— Զինուորական պաշտօնատան մէջ, Միւշիրներէ և Ֆերիգներէ բաղկացեալ մասնաժողով մը կազմուեր է, օսմանեան հպատակ ամեն ազգէ կամաւոր զինուորագրութեան համար։

— Բ. Դրնէն հրաման դացեր է դաւառները, որ օտար հպատակ եղող ոճրագործներն այսուհետև իրենց որոշեալ պատիժն Թուրքիոյ մէջ կրեն, և հիւպատոսարանաց չյանձնուին՝ հակառակ հաստատեալ դաշնադրութեանց։

— Թնդանօթարանի պաշտօնատան մէջ յատկապէս ժողով մը կազմուեր է՝ ամրութեանց համար պէտք եղած թընդանօթներն զետեղելու, և՝ նաւատորմիղին թնդանօթներն ու ռազմական ուրիշ պիտոյքն հայթայթելու համար։

— Ելևմտից նախարարը՝ թղթադրամին շրջաբերութիւնը դոհացուցիչ վիճակի մը վերածելու և լիրային գինը իջեցուներլու համար բանաւոր միջոց մը կըտեր է, և այս օրերս յատկապէս մասնաժողով մը կազմելով՝ խորհրդակցելէն յետոյ՝ պիտի գործադրուի եղեր։

— Պասիրէթ կգրէ, թէ շաբաթ երեկոյեան դէմ Բ. Դրնէն Լոնտոնի օսմանեան դեսպանին հրաման դացեր է, Եգիպտոսի տուրքէն առնուած և Անդղիոյ Պանքային մէջ պահուած դրամն՝ 1854 և 1851ի փոխառութեանց համար չվըճարել։

— Բ. Դրնէն հրահանգ դացեր է՝ օտար կառավարութեանց քով գտնուող օսմանեան դեսպանաց, որ իմանան թէ՝ դեսպանաժողովոյ վերջին նիստին մէջ յանուն համայն Եւրոպիոյ խօսելու իրաւունք տրուած էր Ռուսիոյ դեսպան Իկնաթիէվ զօրավարին։

— Կըսուի, թէ Աւստրիա չհաճիր՝ Սոֆիոյի նաւահանգիստը Գարատաղի իշխանութեան թողուլ։

— Սերվիոյ իշխանութեան կողմանէ պաշտօնական մը մայրաքաղաքս պիտի դայ եղեր՝ հաշտութեան պայմանաց վերայ բանակցելու համար։ Գարատաղի իշխանութեան կողմանէ ալ մէկը Շքոտրա անցնելով՝ Կոստանդ փաշայի հետ պիտի բանակցի։

—Օտար կառավարութեանց քով գըտնուող օսմանեան դեսպաններն՝ իրենց ամսականներուն մէկերորդը նուիրեր են ինպաստ զինուորական ծախուց։

— Քանի մ՝օր մայրաքաղաքս գտնուող Տօն Գարլոս՝ որ Եգիպտոս ուղևորեցաւ, 60 ֆրանգ նուիրեր է ինպաստ զինուորական ծախուց Թուրքիոյ։

— Իզմիրի առջև գտնուող գերմանական նաւուն նաւաստիներէն մէկն, գաղղիացի մը հետ կռուի բռնուած և սպանուած ըլլալով՝ Գերմանիա այժմ փոխարինութիւն կպահանջէ Գաղղիայէն։

—Միտիլլիէն կգրեն, թէ Այվալըի մօտ Մէսգօնիսա կղզւոյն մէջ 20 տարիէ հետէ բնակեալ յոյն եպիսկոպոսն՝ սպանուած, և տունը՝ կողոպտուած գտնուեր է։

—Կայսերական հրամանաւ պալատան մէջ վար դրուած կինամուէր՝ Գարատաղցւոց կողմանէ քթերնին, ականջնին և շրթունքնին կտրուած զինուորներէն մին։ Այս օրերս բժշկուած ըլլալով նոյն զինուորն՝ Նորին վեհափառութեան կողմանէ 5000 ղրշ նուէր տրուեր, և 500 ղրշ ալ ամսական կապուեր է։

— Թէքիրտաղի մէջ հայ կին մը՝ իւր երեք նորատի որդւովքն անոք ու թշուառ և աւուրն պարենի կարօտ մնացած ըլլալով՝ յուսահատեր ու ինքզինքը կախելու ելեր է. բայց իմացուելով հասեր ազատեր են խեղճը, և յատկապէս մասնաժողով մը կազմուելով՝ երկու աւուր մէջ 10700 ղրշ հաւաքուեր է, և մինչև 30000 ղրշի պիտի վերածուի։

Այսպիսի ծանր դէպքերու պատմութիւններ՝ ուրիշ կողմերէ և նոյն իսկ մայրաքաղաքէս ալ կլսուին այս օրերս։

— Աղեկսանդրիոյ մէջ, Լոյտ ընկերութեան շոգենաւուց վերատեսուչն ինքզինքը սպաններ է, բայց պատճառն դեռ յայտնի չէ։

Գերմանական լրագիրք իբրև ըստոյգ կհրատարակեն, թէ Ռուսիոյ կայսրը հրաժարելով՝ աթոռը իր որդւոյն պիտի թողու։

Այս լուրը շատ անդամ հրատարակուեցաւ։

— Պարոն տիտղոսը տրուեր է Լոնտոնի Տէյլի-Թէլէկրաֆ և Բալ-Մալ լրագրաց արտօնատէրերուն, արևելեան խնդրոյն մէջ դոհացուցիչ ընթացք մը բռնելնուն համար։

— Ռուսիոյ կառավարութիւնը՝ օտար տէրութեանց քով ունեցած դեսպաններուն հրաման ղրկեր է, որ արևելեան խնդրոյն մէջ կառավարութեանց ի՛նչ կարծիք ու դիտաւորութիւն ունենալն իմանան ու տեղեկագրեն։

— Աւստրիոյ կառավարութիւնը որոշեր է՝ պատերազմական վիճակի մէջ դընել զինուորական զօրութիւնը։

— Անդղիոյ խորհրդարանը վաղը կըբացուի։ Արևելեան խնդրոյն վրայ վիճաբանութիւն պիտի ըլլայ նախ քան զամենայն։ Կարեւոր տեղեկութիւններ կըսպասուին։ Լորտ Սալիզպըրի խորհրդարանին պիտի հաղորդէ՝ դեսպանաժողովոյ բոլոր բանակցութիւնն ու արդիւնքը։

— Աւստրիոյ կառավարութիւնն այս օրերս Դաղմատիոյ կողմի ամրութիւնները առաւել կամրապնդէ, պատերազմի ատեն իտալական յարձակման դէմ պատրաստ գտնուելու համար։

— Հոլանտայի կառավարութիւնը՝ Աչինի վրայ բացած պատերազմին պատճառաւ՝ մինչև ցարդ 100 միլիոն ֆիորին վատներ և 10 հազար զօրք կորսնցուցեր է։

— Բեդրոպուրկի մէջ 12 հազար դորձաւոր ունեցող գործարան մը դոցուած և մարդիկն արձակուած ըլլալով՝ կառավարութիւնն ստիպուեր է նպաստել, որպէս զի գործարանը բացուի։ Ռուսիոյ ուրիշ կողմերն ալ ընկերութիւններ ու գործարաններ կփնասուին ու կփակուին, մօտալուտ պատերազմի մը երկիւղին պատճառաւ։

— Հունգարիոյ նախարարաց ոմանք կուզեն եղեր, որ հրատարակուի թէ Սէրտարը-Էքրէմին ընծայեալ սուրը համայն Հունգարիոյ կողմանէ չէ, այլ մասնաւոր նուիրատուութիւն մ՝է, և թէ՝ արևելեան խնդրոյն մէջ Հունգարիա Եւրոպիոյ ընթացից պիտի հետևի։

— Գերմանական լրագրաց գրածին նայելով՝ Ռուսիա դարձեալ կաշխատի, երկրորդ անգամ դեսպանաժողով մը գումարել տալու համար։

— Երկիւղ կար, թէ Ամերիկայի մէջ ներքին պատերազմ մը մօտալուտ է՝ նոր նախագահին ընտրութեան պատճառաւ, որ խարդախեալ կհամարուի։ Այս անդամ Վաշինկթընէն հեռագիր մը լուր կուտայ, թէ այդ երկիւղն փարատեցաւ՝ ընտրական գործողութեանց քննութեան համար յատկապէս դատարան մը կազմուելով՝ ըստ որոշման ծերակուտին և երեսփոխանական ժողովոյ։

— Ռուսիոյ կառավարութիւնը, 200 միլիոն ռուպլիի ներքին փոխառութիւն մ՝ալ ընելու մտադիր է, ըստ լրագրաց Վիէննայի։

Աղգ. Հիւանդանոցի ներքին բժիշկ Տօքթ. Գաբրիէլ էֆէնտի Նահապետեան, այսուհետև ամէն չորեքշաբթի օրերը ժամը 6 էն 8 Սամաթիա Իմրահօրը Թօգաթլեան Պ. Գաբրիէլին դեղարանը, և ուրբաթ օրերը ժամը 6 էն 8 դարձեալ Սամաթիա Մ. Ճիվանաքիին դեղարանը, նաև Հիւանդանոց իրեն գիմող աղքատ հիւանդաց ըստ առաջնոյն ձրի նայելու պատրաստ ըլալը կը ծանուցանէ արդոյ հասարակութեան։

ԻԼԱՆ
ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Պէյդօղ գալէվրահանէ անպարընա մահֆուզ նումունէլէրի վէճհլէ, մուպարեա օլունաճադ դբրդ պին դբյէ եէրլի թօղմագլանմըշ քէօսէլէ իլէ օն պին ատէտ եէրլի իմալի սիհահ վագթանըն պահասը մադպուզ սէնէտլէրի վիրուտինտէ, պէր վէճհի բէշին սիմ մէճիտիեէ եիկիրմի ղրուշա օլարադ, վէ սիմ մէճիտիյէ վերիլմէզսէ, բիացա ֆիեաթբյլա ֆարդբ պիլ հիսապ դայիմէ օլարադ նիզամիյէ խաղինէսինտէն վերիլմէք շարթբ իլէ, մեղքիւր քէօսէլէնին պէհէր դբեէսի եիկիրմի իւչ վէ վագթանըն պէհէր դբեէսի օթուզ ղրուշա օլարադ, թալիպի էօհտէսինտէ օլուպ, քեանունի սանիի բումինին եիրմի ալթընճը չարշէմպիհ կիւնիւ դարարը դաթիսի վերիլէճէյինտէն, իթա իթմէեէ թալիպ օլանլարըն եէվմի մեղքիւրտէ տարը շուրայի ասքերիյէ կէլմէլերի։

20 քեանունի սանի 1877

Պապը Սէրասքէրի

—

Զուդա վէ էճզայի սայիրէսի նիզամիյէ էլպիսէ անպարը մալինտէն վիրիլերէք՝ դաթ վէ իմալընա լուղում կէօրինան եիկիրմի պին թագբմ նէֆէրաթա մախսուս սէթրի բանթալընան իճրեթի դաթիյէ վէ խայաթիյէսի՝ մադպուզ սէնէտլերի վիրուտինտէ եիւզլիւք դայիմէ եիւզ օթուզ ղրշա օլարադ պէր վէճհը փէշին նիզամիյէ խաղինէսինտէն թէսվիյէ իտիլմէք, վէ պու եիկիրմի պին թագբմ էլպիսէտէն հաֆթատա իքի պին պէշ եիւզտէն եիւզ պին դաթէ դատար վիրիլէճէք էլպիսէնին պէհասը հէր նէյէ պալիղ օլուրսա՝ թէէմինաթ օլմադ իւզրէ օլ մբդատար էլպիսէնին անպարճա օլան մալինի գաչ ղրուշա պալիղ իսէ՝ տէբողիթօ նամբ բլա միւթէհատիւի թարաֆընտան էվվէլճէ վիրիլմէք, վէ շայէտ մեղքիւր էլպիսէլերին էճզասընտան պէր ղյաթ ղուհուր իտէրսէ՝ վէ չուդալերի ալիկիշուրսէ՝ մեղքիւր տէբողիթօ ադչէսինտէն պէհասը թաղմին իթտիրիլմէք չէրայիթի իլէ, պէհէր թագբմինըն իւճրեթի դաթիյէ վէ խայաթիյէսի օն ալթը ղրշա օլարադ թալիպի էօհտէսինտէ օլուպ, քեանունի սանիի բումինին եիկիրմի եէտինճի փէնճչէնպիհ կիւնի դարարը դաթիսի վիրիլէճէկինտէն՝ օլ վէճհ իլէ իմալինէ թալիպ օլանլէրին եէվմը մեղքիւրտէ տարը շուրայի ասքերիյէ կէլմէլերի։

25 քեանունի սանի 1877

Պապը Սէրասքէրի

—

Ասաքիրի շահանէ երզաք անպարընա ալթը պին դբյէտէն եէտի պին դբյէյէ դատար միւպայեա օլունաճադ ըսբարմաչէթ մոմը հէման թէսլիմ օլընմադ, վէ պէհասը մադպուզ սէնէտի վիրուտինտէ պէրվէճհը փէշին սիմ մէճիտիյէ իկիրմի ղրուշա օլարադ, վէ սիմ մէճիտիյէ վիրիլմէտիկի հալտէ, վիացա ֆիաթի ըլա ֆէրդի պիլ հիսապ դայիմէ օլարադ նիզամիյէ խաղինէսինտէն վիրիլմէք շարթբ ըլա, պէհէր դբյէսի օն իքի ղբրուշա թալիպի էօհտէսինտէ օլուպ, քեանունի սանիի բումինին եիկիրմի եէտինճի փէնճչէնպիհ կիւնի դարարը դաթիսի վերիլէճէկինտէն՝ իթա իթմէյէ թալիպ օլանլերին եէվմի մեղքիւրտէ Տարը շուրայի ասքերիյէ կէլմէլերի։

25 քեանունի սանի 1877

Պապը Սէրասքէրի

—

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

Ֆ. Վ. Ծանցի սուցը յանձնարարություն՝ բիլցերը ալ կրցդուցի դուրս դրկելու։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԵՒ ԴԵՂՕՐԷԻՑ
Վ. ԾԱՆՆԻ
Բերա Մեծ փողոց Աղաճամի թիւ 77
ԵՒ
Կ. Պոլիս Կամուրջի հրապարակը թիւ 1—2

Եւրոպիոյ առաջին գործարանաց հետ յարաբերութեամբ կապուած, և իւր դեղորէից ընտրութեամբն և գնոց չափաւորութեամբ հրաշակուած։

Միակ մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիագէտին շինած Ֆն լաֆնէն, որոքիրիկ ալիւր տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդուեթնէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքէն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն դըլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած։

Հոն կը գտնուի նաև.

Ֆոսֆոս (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտրուի։

Սէ-լֆոն ոբ Ֆէնէն, զուտ և մաքուր, Ֆիլթիէ, Տիւպօսք, Ժօպսթ և Էվանս Լէդէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած։

Ձկան է-ղ, զուտ, Ֆրիսթիանայի Բէթէր Մէաէրի գործարանէն ելած։

Եղէրդէ (հինտիպա) խոհոտ, Լուտվիկսպուրկի Հ. Ֆրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող՝, որ հասարակ խահուէի հետ խառնելով գինը մեծապէս կիլեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու։

Արոմատիկ սոսոյց ամեն ժամու մէջ։

Տէ-ժէնէ Լոսը, մաղերու անվրիպելի ներկ։

Եալընըզ իքի ատէտ սաղիր չէ քմէճէ անախթարը իլէ, պէր ատէտ սաաթ անախթարընը հավի քիւչիւք փարա չանթասը զայ իտիլտիկինտէն, հէր քիմին եէտինէ կէչմիշ իսէ, քէօբրիւ պաշընտա քիթապճի Մատթէոսեանընը տիւքեանընա կէօթիւրտիւկի հալտէ, եարբմ լիրա վիրիլէճէք։

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏՐ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կաղեր, գլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կզգենու։

ONGUENT HOLLOWAY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (շիրիփէնչէ), սրունից և ստեանց վերքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբսիսի, հաղի՛, սրտի բարտխման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահէէ-գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տոքթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքքսֆորտ փողոց թիւ 533։

ՊԱՏՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

1.—Փունջը ՀՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ գաւառաց համար։

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով։

6.—Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անգամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պոլիս Ալաճա-Համամ Խալիլ խան միջին լարկ թիւ 19։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Բիզա փաշա խան թիւ 3